Հարգելի Սեդա Ղուկասյան,

ԱԺ վեցերորդ գումարման առաջին և երկրորդ նստաշրջանների ընթացքում քաղաքացիներից ստացվել են բավականին մեծ թվով դիմում/նամակներ: Դիմումների մի մասը առարկայական, հստակ ձևակերպված որևէ պահանջ/խնդիր/առաջարկ չի պարունակում:Հաճախ հանդիպում են նաև դիմումներ, որոնցում առաջ քաշված հարցերին լուծում տալը դուրս է պատգամավորի օրենքով սահմանված լիազորությունների շրջանակից: Նշված ժամանակահատվածում ստացված դիմումներից մի քանիսի առնչությամբ կազմակերպվել են հանդիպումներ՝ դիմումատու քաղաքացիների հետ: Վերջիններիս հուզող հարցերը կրել են հիմնականում կենցաղային բնույթ: Այդպիսիք պատասխան են ստացել բանավոր՝ խորհրդատվական կարգով, համատեղ քննարկման միջոցով: Արագածոտնի մարզից ստացված մեկ դիմում ուսումնասիրվել և ուղարկվել է ՀՀ Տարածքային Կառավարման նախարարություն՝ հարցն ըստ ենթակայության լուծելու համար և այս պահի դրությամբ գտնվում է ընթացքի մեջ: Անհատապես հասցեագրված դիմում /նամակներում պարունակվող փաստերի, ինֆորմացիայի վերաբերյալ տեղեկություններ չեմ կարող փոխանցել, քանի որ դրանք վերաբերվում են քաղաքացիների մասնավոր կյանքին և վստահ չեմ, որ կարող եմ դրանք հանրայնացնել: Տեղեկացնեմ նաև, որ օրենսդրական նախաձեռնություն հեղինակելուն և/կամ գործող օրենքում փոփոխություն կատարելուն նպաստող որևէ իրավաչափ և առարկայական առաջարկ պարունակող դիմում Ձեր կողմից նշված ժամանակահատվածում չի ստացվել:

Հարգանքով՝ Նապոլեոն Ազիզյան